Հավելված
ՀՀ կառավարության 2018 թ.
հունվարի 11-ի նիստի N 1
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ 2018-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստը (այսուհետ՝ Պետական պահուստ) նախատեսված է պետության և ազգային տնտեսության անհետաձգելի կարիքների բավարարման համար, որն արտակարգ իրավիճակների պայմաններում ապահովում է պետության և ազգային տնտեսության՝ թանկարժեք մետաղներով ու թանկարժեք քարերով ինքնաբավությունը:

2. Վերջին տարիներին Պետական պահուստները համալրվել են միայն օրենքով սահմանված կարգով բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված, պետությանն անցած թանկարժեք մետաղներով, թանկարժեք քարերով և դրանցից պատրաստված իրերով:

3. Շուրջ երկու տասնամյակ Պետական գանձարանում գտնվող Պետական պահուստներից թանկարժեք քարերի, թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարում չի իրականացվել, որի արդյունքում նշված արժեքները կորցնում են իրենց արդիականությունը՝ ապրանքային տեսքը և արժեքը: Դրա վառ օրինակն է 2017թ. աճեցված (կուլտիվացված) մարգարիտի օտարման փորձը: Կազմակերպված աճուրդների ընթացքում այդպես էլ գնորդներ չգտնվեցին:

4.Պետական գանձարանը որդեգրել է մոտեցում, որ Պետական պահուստներում պետք է կուտակել միայն բարձր լիկվիդայնություն ունեցող պետական ստանդարտին համապատասխան ձուլակտորներ և թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված պատմամշակութային և բարձր գեղարվեստական արժեք ունեցող իրեր:

5. Խնդրի լուծումը պայմանավորված է Պետական պահուստների կառավարումը լիարժեք ու արդյունավետ դարձնելու, գործընթացների նկատմամբ համակարգված հսկողություն իրականացնելու Պետական պահուստների ձևավորման, համալրման ու ծախսման միջնաժամկետ, ռազմավարական ծրագրավորման անհրաժեշտությամբ:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

6. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 737-Ն որոշման հավելված N1-ի 8-րդ կետի «ե» ենթակետի՝ պետական գանձարանի գործառույթներից են Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող և պետական գանձարանում հաշվառված թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, ինչպես նաև թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված իրերի՝ պետական պահուստներից օտարումը, բաց թողնված արժեքների դիմաց վճարումների գանձումը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային մաս մուտքագրումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեսակների, անվանացանկի ու ծավալների համաձայն:

7.«Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի՝ պետական գանձարանն է լիազորված իրականացնելու պետական սեփականություն հանդիսացող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվեկշռում գտնվող արժեքների) հաշվառումն ու կառավարումը:

8. Պետական պահուստների մասը կազմող արժեքների գույքագրման և պետական գանձարանին տեղեկատվության տրամադրման միջոցառումների իրականացման արդյունքում պետական գանձարանը հստակեցրել է պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց (բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող միջնակարգ և ավագ դպրոցների) հաշվեկշիռներում հաշվառված արժեքների առկայության, շարժի, որակական վիճակի, գույքագրումների և պահպանման

պայմանների մասին տվյալները: 88 կազմակերպություններից ստացված տեղեկությունները ճշգրտվել և մուտքագրվել են համապատասխան էլեկտրոնային բազա:

9. Պետական գանձարանի կողմից մշակութային օջախների, թանգարանների հաշվեկշիռներում գտնվող արժեքները տարանջատվել և դասակարգվել են ըստ պետական պահուստի արժեքների և ազգային պահուստի արժեքների (անձեռնմխելի են և ենթակա չեն օտարման): Ազգային պահուստի արժեքների ամփոփ տվյալներն են՝ ոսկի՝ 64,4 կգ, արծաթ՝ 1436,2 կգ, պլատին՝ 475.2 գրամ և պալադիում՝ 0.02 գրամ, թանկարժեք մետաղների համաձուլվածք՝ 181.8 կգ:

10. Պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց հաշվեկշիռներում առկա պետական պահուստի արժեքների ամփոփ տվյալներն են՝ ոսկի՝ 1.7 կգ, արծաթ՝ 25.6 կգ, պլատին՝ 63.5 կգ, պալադիում՝ 312.7 գրամ, իրիդիում՝ 10.8 կգ, ռոդիում՝ 455.3 գրամ, օսմիում՝ 2.23 գրամ, ինչպես նաև սարքավորումների մեջ՝ ոսկի՝ 4.6 կգ, արծաթ՝ 461.2 կգ, պլատին՝ 3.5 կգ, պալադիում՝ 9 կգ, ռոդիում՝ 0.4 գրամ, իրիդիում՝ 0.1 գրամ:

11. Պետական գանձարանում գտնվող պետական պահուստի արժեքների ամփոփ տվյալներն են՝ ոսկյա իրեր՝ 79,7 կգ, մետաղական ոսկի՝ 14,3 կգ, արծաթյա իրեր՝ 74,1 կգ, մետաղական արծաթ՝ 26,9 կգ, արծաթի և ոչ թանկարժեք մետաղի համադրությամբ զարդեր՝ 4,7 կգ, պլատին՝ 3,0 կգ, պալադիում՝ 1,3 կգ, օսմիումի օքսիդ՝ 4.32 գրամ, թանկարժեք քարեր (ադամանդ, ադամանդի հումք)՝ 3575.8 կարատ, թանկարժեք քարեր (ալմաստի քարեր և հումք)՝ 762 կարատ, թանկարժեք քարեր (զմրուխտ)՝ 256 կարատ, աճեցված (կուլտիվացված) մարգարիտ՝ 102,8 կգ, արհեստական քարեր՝ 4712 հատ, արհեստական քարերից շարաններ՝ 1,2 կգ, կիսաթանկարժեք քարեր՝ 417 կարատ: Պետական գանձարանում գտնվող պետական պահուստի արժեքների ընդհանուր արժեքը կազմում է մոտ մեկ միլիարդ ինը հարյուր միլիոն դրամ: Արդյունքում կատարվել են ազգային հարստության գույքագրում և պետական պահուստի իրական չափի գնահատում: Տես՝ աղյուսակ 3:

12.Պետական գանձարանում գտնվող թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված պատմամշակութային և բարձր գեղարվեստական արժեք ունեցող թվով 103 հատ ոսկուց և արծաթից մետաղադրամները ցուցադրված են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնում: Ընդ որում Պետական գանձարանում գտնվող Հայաստանի Հանրապետության թանկարժեք

մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստի բաղկացուցիչ մաս կազմող ազգային պահուստի արժեք ճանաչված թվով 31 իրերից (Ազգային պահուստի արժեքներն անձեռնմխելի և անբաժանելի են, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության սեփականությունը և ենթակա չեն օտարման) 5-ը ցուցադրված են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի Այցելուների կենտրոնում:

III. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. Պետական գանձարանում գտնվող թանկարժեք քարերի, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի Պետական պահուստներից 1996 թվականից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և չափով իրացում (հրապարակային աճուրդների միջոցով) չի իրականացվել, որի արդյունքում պետական գանձարանում կուտակվել են բավարար քանակությամբ թանկարժեք քարեր, ինչպես նաև թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված իրեր:

14. Բացի պետական գանձարանում գտնվող պետական ստանդարտին համապատասխան ձուլակտորներից, թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված պատմամշակութային և բարձր գեղարվեստական արժեք ունեցող իրերից՝ մնացած արժեքների պահպանումը ոչ արդյունավետ և աննպատակահարմար է, քանի որ թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված իրերը տարիների ընթացքում կորցնում են իրենց արդիականությունը՝ կորցնելով ապրանքային տեսքը և արժեքը:

IV. ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

15. Ծրագրի ռազմավարության և դրա իրականացման անհրաժեշտ գործողությունների կատարումը միջոցառումների փոխկապակցված ամբողջական համակարգ է, որը նպատակաուղղված է հետևյալ հիմնախնդիրների իրականացմանը՝

15.1. Պետական պահուստների կառավարումն արդյունավետ դարձնելու նպատակով, հրապարակային աճուրդների միջոցով, պետական գանձարանում գտնվող իրացման ենթակա ոչ լիկվիդային իրերի Պետական պահուստներից օտարում՝ ըստ հետևյալ առաջնահերթության.

Աղյուսակ N 1

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ	Քանակը /հատ/	Քաշը /գրամ/	Շուկայական արժեքը (դրամ)
1.	Թանկարժեք քարեր՝ ալմաստի քարեր և հումք	կարատ		761.94	210,415.67
2.	Արհեստ.քարեր	հատ	4712		582,010.00
3.	Արհեստ.քարերերից շարաններ	գրամ		1177.40	48,000.00
4.	Կիսաթանկարժեք քարեր	հատ/ կարատ	15	417.40	76,000.00
5.	Թանկարժեք քարեր՝ զմրուխտ	կարատ		256.36	3,443,700.00
6.	Թանկարժեք քարեր՝ ադամանդ, ադամանդի հումք	կարատ		3575.76	594,359,354.10
7.	Ձարդեր արծաթի և ոչ թանկարժեք մետաղի համադրությամբ	գրամ		4741	1,243,473.01
8.	Արծաթյա իրեր	գրամ	7800	28271.14	14,971,230.46
9.	Ոսկյա իրեր	գրամ	18255	76643.77	918,895,043.08
	Օսմիումի օքսիդ	գրամ		4.32	
	Ընդամենը				1,533,829,226.3

15.2. Թանկարժեք քարերի՝ զմրուխտի, ադամանդի, ադամանդի հումքի իրացման գինը չի կարող պակաս լինել աճուրդից առաջ վերագնահատված նվազագույն գնից: Ոսկյա և արծաթյա իրերի յուրաքանչյուր գրամի իրացման գինը չի կարող պակաս լինել Պետական գանձարանի կողմից սահմանված մեկ գրամ քիմիապես մաքուր թանկարժեք մետաղների բացթողնման գներից (հաշվարկը կատարել ելնելով մետաղի հարգից), իսկ թանկարժեք քարերից ներդիրների առկայության դեպքում՝ պետք է ավելացվի նաև ներդիրների արժեքը, որը չի կարող պակաս լինել աճուրդից առաջ վերագնահատված նվազագույն գնից:

15.3. Հրապարակային աճուրդների միջոցով օտարման ենթակա ոչ լիկվիդային իրերի իրացման ժամանակացույց՝

Աղյուսակ N 2

Նպատակը	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետ	Ակնկալվող արդյունք (դրամ)
Օտարման նպատակը ոչ լիկվիդային իրերի ապրանքային տեսքը և արժեքը չկորցնելն է	1.Թանկարժեք քարերի՝ ալմաստի քարերի և հումքի օտարում	2018թ. III եռամսյակ	210,415.67
	2.Արհեստական քարերի օտարում		582,010.00
	3.Արհեստ.քարերից շարանների օտարում		48,000.00
	4.Կիսաթանկարժեք քարերի օտարում		76,000.00
	5.Թանկարժեք քարերի՝ զմրուխտի օտարում		3,443,700.00
	6.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում		50,000,000.00
	7. Արծաթի և ոչ թանկարժեք մետաղի համադրությամբ զարդերի օտարում		1,243,473.01
	8.Արծաթյա իրերի օտարում		2,500,000.00
	9.Ոսկյա իրերի օտարում		90,000,000.00
	Ընդամենը 2018թ. III եռամսյակ		148,103,598.68
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում	2018թ. IV եռամսյակ	45,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		70,000,000.00
	Ընդամենը 2018թ. IV եռամսյակ		116,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում	2019թ. I եռամսյակ	45,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		70,000,000.00
	Ընդամենը 2019թ. I եռամսյակ		116,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում	2019թ. II եռամսյակ	45,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		70,000,000.00
	Ընդամենը 2019թ. II եռամսյակ		116,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում	2019թ. III եռամսյակ	45,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		70,000,000.00
	Ընդամենը 2019թ. III եռամսյակ		116,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում	2019թ. IV եռամսյակ	45,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		70,000,000.00
	Ընդամենը 2019թ. IV եռամսյակ		116,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում	2020թ. I եռամսյակ	45,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		70,000,000.00
	Ընդամենը 2020թ. I եռամսյակ		116,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի, ադամանդի հումքի օտարում	2020թ. II եռամսյակ	55,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		80,000,000.00
	Ընդամենը 2020թ. II եռամսյակ		136,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ ադամանդի,	2020թ. III	55,000,000.00

	աղամանդի հումքի օտարում	եռամսյակ	
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		80,000,000.00
	Ընդամենը 2020թ. III եռամսյակ		136,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ աղամանդի, աղամանդի հումքի օտարում	2020թ. IV եռամսյակ	55,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		2,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		80,000,000.00
	Ընդամենը 2020թ. IV եռամսյակ		137,000,000.00
	1.Թանկարժեք քարերի՝ աղամանդի, աղամանդի հումքի օտարում	2021թ. I եռամսյակ	64,359,354.10
	2.Արծաթյա իրերի օտարում		1,471,230.46
	3.Ոսկյա իրերի օտարում		98,895,043.08
	4.Օսմիումի օքսիդի օտարում		
	Ընդամենը 2021թ. I եռամսյակ		164,725,627.64
	1.Թանկարժեք քարերի՝ աղամանդի, աղամանդի հումքի օտարում	2021թ. II եռամսյակ	45,000,000.00
	2.Արծաթյա իրերի օտարում		1,000,000.00
	3.Ոսկյա իրերի օտարում		70,000,000.00
	Ընդամենը 2021թ. II եռամսյակ		116,000,000.00
Ընդամենը 2018-2021թթ.			1,533,829,226.32

15.4. Օտարման ենթակա իրերը հրապարակային աճուրդի ներկայացվելուց առաջ Պետական գանձարանի կողմից վերագնահատվում են՝ առաջնորդվելով տվյալ պահի շուկայական գներով: Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը և դրանցից պատրաստված իրերը, հանդիսանում են առանձնահատուկ ապրանք և, որոնց բնորոշ են նաև կարճ ժամանակահատվածում գնային տատանումներ, հետևաբար աճուրդից առնվազն մեկ օր առաջ արդեն իսկ վերագնահատված իրի արժեքի և տվյալ պահին նմանատիպ իրի շուկայական արժեքի միջև 5 և ավելի տոկոս դրական կամ բացասական շեղման դեպքում կատարվում է տվյալ իրի կրկնակի վերագնահատում:

15.5. Իրերի իրացումից ձևավորված գումարն ուղղել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ «Մուտքեր թանկարժեք մետաղների իրացումից» հաշվին: 2018-2021 թվականների թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի Պետական պահուստների օտարման միջոցառումների իրականացման գործողությունները բյուջետային ֆինանսավորման անհրաժեշտություն չեն պահանջում:

V. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

16. Պետական գանձարանը կիրականացնի Պետական պահուստների միասնական հաշվառումը, հաշվեգրումը և կենտրոնացված կառավարումը՝ միջազգային պրակտիկայում գործող մեթոդներին համահունչ, որոնք իրենց դրական ազդեցությունը կունենան պետության ռազմավարական խնդիրների արդյունավետ լուծման գործում,

ինչպես նաև հնարավորություն կստեղծվի Պետական պահուստներն արդյունավետ օգտագործելու Հայաստանի Հանրապետության ֆինանսական, գիտական, սոցիալական, մշակութային, ներդրումային և այլ կարիքների բավարարման նպատակով:

17. Ծրագրի իրականացման անհրաժեշտ գործողությունների կատարման արդյունքում Պետական գանձարանը կտիրապետի 400,0 մլն դրամ արժողությամբ բարձր իրացվելիություն ունեցող և արժութային արժեք համարվող պետական ստանդարտին համապատասխան ձուլակտորների և պատմամշակութային և բարձր գեղարվեստական արժեք ունեցող իրերի:

Աղյուսակ N 3

	ՈՍԿԻ		ԱՐԾԱԹ		ՊԼԱՏԻՆ		ՊԱԼԱԴԻՈՒՄ		ԻՐԻԴԻՈՒՄ		ՌՈԴԻՈՒՄ		ՕՍՄԻՈՒՄ		Համաձուլ-վածք		Թանկար-ժեք և կիսաթան-կարժեք քարեր		Արհես-տական քարեր	Արհեստական քարերից շարաններ և աճեցված մարգարիտ
	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կգ)	հատ	քաշը (կարատ)	հատ	քաշը (կգ)
Թանգարան	7301	64.4	59979	1436	12	0.5									736	182				
Պետական մարմին-ներ, պետական հիմ-նարկներ, պետական ոչ առևտրային կազ-մակերպու-թյուններ և 100 տոկոս պետա-կան մասնակցու-թյամբ իրավաբանա-կան անձինք		6.3		486.8		67		9.3		10.8		0.46		0						
Պետական զանձարան	18804	93.9	8567	105.7		3.0		1.2						0		9.0		5000	4712	103.8